

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ
ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,

Ռուս-հայկական համալսարան, Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ

Բանալի բառեր՝ մասնագիտական հայոց լեզու, բառապաշար, տեքստ, լեզվական նորմ, մասնագիտական խոսք, լեզվական միավոր:

Բուհերի ոչ լեզվական բաժիններում հայոց լեզվի դասավանդումը տասնամյակներ շարունակ խնդրահարույց է եղել և տարակարծությունների տեղիք տվել: Այն քննարկման առարկա էր դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից: 1993 թ. ընդունված «Լեզվի մասին ՀՀ օրենքի» համաձայն՝ հայոց լեզվի ուսուցումը բուհերում պարտադիր էր դառնում [Լեզվի մասին ՀՀ օրենք, հոդված 2]¹: Օրենքին հակադրվողները կարծում էին, որ միջնակարգ դպրոցն ապահովում է լեզվի իմացության բավարար մակարդակ, ուստի բարձրագույն ուսուցման խնդիրը մասնագետ պատրաստելն է: Հայերենի՝ բուհական պարտադիր ուսուցման կողմնակիցները շեշտադրում էին մասնագիտական հայերենի հանգամանքը: Սակայն օրենքն ընդունելիս հայոց լեզվի դասավանդման բարելավման խնդիր չէր դրվում, և հայոց լեզվի բուհական ծրագիրը հիմնականում կրկնում էր դպրոցական նյութը: Վերջին տարիներին էլ այս խնդիրը սրվեց և բուռն քննարկումների առարկա դարձավ: Պատճառն այն էր, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի վերջին նախագծից դուրս էր մնացել գործող օրենքի այն դրույթը, որով հայերենը պարտադիր առարկա էր բոլոր բուհերի համար: Վերոնշյալ առաջարկությունը թեև շրջանցում էր «Լեզվի մասին» օրենքի 2-րդ հոդվածը, ինչպես նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2 (1) կետը², սակայն խորհելու տեղիք էր տալիս:

Անվիճելի է, որ հայոց լեզվի բուհական դասընթացում անխուսափելի պիտի լինեն բովանդակային և ծրագրային փոփոխությունները: Բուհում ոչ թե պետք է կրկնվի դպրոցական ծրագիրը, այլ դասավանդվի մի առարկա, որը կօգնի ուսանողներին տիրապետել մասնագիտական խոսքին և լեզուն դարձնել իրենց աշխատանքային գործիքը: Ճիշտ է, ուսանողների՝ դպրոցական գիտելիքների ոչ բավարար մակարդակը, սահմանափակ ժամաքանակը հնարավորություն չեն տալիս ամբողջովին իրականացնելու վերոնշյալ նպատակը, սակայն անկախ այս ամենից, բուհը չպետք է դիտարկվի որպես դպրոցական խնդիրները լուծող, բացերը լրացնող օղակ: Ոչ լեզվական բաժիններում հայերենի բուհական դասընթացի անվանումը, ըստ պետական չափորոշիչների, «Հայոց լեզու և

¹ Տե՛ս Լեզվի մասին ՀՀ օրենք, հոդված 2, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=90418>:

² Տե՛ս «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը և ՀՀ Կառավարության 2005 թ. ապրիլի 14-ի «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին» N 449-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետը:

գրականություն» է, որը մեր կարծիքով խնդրահարույց է: Անվիճելի է, որ լեզուն և գրականությունը տարբեր առար-կաներ են և չեն կարող դասավանդվել մեկ դասընթացի շրջանակներում՝ մանա-վանդ սահմանափակ ժամանաքանակի պայմաններում (ըստ պետական կրթական ծրագրի՝ ժամաքանակը 64 ժամ է՝ շաբաթական մեկ մուտքով): Հավանաբար որևէ արտերկրյա համալսարանում այսպիսի առարկա չի դասավանդվում, չի ուսուցանվում նաև ազգային լեզու: Հետևաբար պետք է փոխվի նաև առաջարկվող դասընթացի անվանումը. այն կարող է կոչվել «Մասնագիտական հայոց լեզու», որովհետև ի վերջո բուհում դասընթացի նպատակը պիտի լինի զարգացնել ուսանողների մասնագիտական բանավոր և գրավոր խոսքը: Դպրոցում աշակերտները սովորում են հայոց լեզվի կանոններն ու օրինաչափությունները, բուհում դրանք պետք է դառնան գործիքներ՝ հայերենի ուսուցմանը ուղղվածություն տալու, այն զուգադրելու մասնագիտական կրթությանը՝ ապահովելով այդ կրթության լիարժեքությունը: Եվ հետևաբար բուհական դասընթացի խնդիրը պետք է լինի ուսանողներին սովորեցնել դպրոցական կանոնները խոսքում կիրառելու հմտությունները՝ տրամաբանված, գեղեցիկ, գրագետ խոսք ունենալու համար, որը կարևոր է ոչ միայն մասնագիտական միջավայրում դրսևորվելու, այլև հաղորդակցվելու համար. «Знание языка, его законов, заложенных в нем возможностей, знание риторики — искусства владения речью — позволяет воздействовать на других людей, использовать слово как оружие: Слово может спасти человека, может и убить; Слово не стрела, но пуще стрелы разит. Поэтому очень важно, кто этим оружием владеет. Прежде чем вложить его в руки подрастающего поколения, следует воспитать в молодых людях те нравственные качества, которые не позволят обращать слово во вред другим» {Л. А. Введенская, Л.Г. Павлова, Е.Ю. Катаева, 2001, с. 4}³.

Այս խնդիրը լուծելու համար հայոց լեզուն հարկավոր է դասավանդել այնպիսի ծրագրով, որը հնարավորություն կընձեռնի՝

- ըմբռնել բանավոր և գրավոր տեքստը, վերլուծել, համապատասխան վերաբերմունք մշակել,
- նպատակային և արդյունավետ գրավոր և բանավոր խոսք կառուցել, փաստարկված դատողություններ անել,
- ցանկացած նյութ համակարգված, հասկանալի և կենդանի խոսքով ներկայացնել:

Վերոնշյալը իրագործելու համար հարկավոր է տարբեր տիպի գիտելիքների (ուղղագրական-ուղղախոսական, կետադրական, բառագիտական, քերականական, տեքստային) ամրապնդում և ձեռքբերում, որոնք բուհական դասընթացում կուսուցանվեն որպես լեզվական նորմեր՝ դրանցով սահմանված օրինաչափությունների ներկայացմամբ, դրանցից կատարվող շեղումների պարզաբանմամբ, զուգաձևությունների բացահայտմամբ⁴:

³ **Л.А. Введенская, Л.Г. Павлова, Е.Ю. Катаева**, *Русский язык и культура речи: Учебное пособие для вузов*. Ростов, 2001, с. 4.

⁴ **Գ. Գևորգյան**, *Արևելահայերենի գործածության նորմեր և շեղումներ*, Եր., 2021:

Այդ գիտելիքների կամ լեզվական նորմերի ուսուցումը պետք է հանգեցվի ոչ թե քերականական կանոնները, սահմանումները, հոլովման ու խոնարհման հարա-ցույցները անգիր անելուն, այլ քերականական ձևերը խոսքում ճիշտ և տեղին կիրառելուն: Ելնելով այս նպատակից՝ տեսական-լեզվաբանական նյութի հաղորդումը ոչ լեզվական բաժիններում պետք է հասցնել նվազագույնի՝ շեշտը դնելով լեզվական միավորների հաղորդակցական և ոճական արժեքների վրա:

Խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն նաև բառապաշարային գիտելիքները: Անհերքելի է, որ որքան հարուստ է սովորողների բառապաշարը, այնքան զարգացած է նրանց խոսքը: Հատկապես կարևորվում է մասնագիտական բառապաշարի իմացությունը: Այս նպատակով էլ բուհում լեզվի ուսուցումն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ սովորողներից յուրաքանչյուրը կարողանա որոշ չափով տիրապետել իր ոլորտին առնչվող մասնագիտական բառապաշարի գոնե նվազագույնին և այդ հենքի վրա հետագայում հնարավորություն ունենա ինքնուրույն զարգացնելու իր լեզվական հմտությունները⁵:

Լեզվական տարբեր իրողություններ ուսումնասիրելու նյութ է ծառայում տեքստը. այստեղ են դրսևորվում, փոխադարձ կապերի ու կախվածությունների մեջ երևում լեզվական տարբեր մակարդակների միավորները, դրանց բնորոշ լեզվաքերականական առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Մասնագիտական գործունեության համար ցանկացած բնագավառ ընտրելու դեպքում ուսանողը պիտի կարողանա վերլուծել ու մշակել տարբեր բնույթի բանավոր կամ գրավոր տեքստեր: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է ուսանողին ծանոթացնել տեքստերի տեսակներին, կառուցվածքին, որոնք նրան անհրաժեշտ կլինեն աշխատանքային գործունեության ժամանակ⁶:

Տեքստ կազմելիս ուսանողին հարկավոր է սովորեցնել լեզվական համապատասխան կառույցներ, կամք, ցանկություն, խորհուրդ, հույզեր, գործողությունների համաժամանակություն ու հաջորդականություն արտահայտող, անձը, առարկան, երևույթը բնութագրող ձևեր, նախադասությունների շաղկապման և կապակցման լեզվական միջոցները: Կարևոր է նաև տեքստի լեզվաոճական խմբագրումը, որի ժամանակ կուղղվեն տեքստի ինչպես իմաստային, այնպես էլ լեզվական սխալները⁷:

Այսպիսով, հայերենի ուսուցման նպատակը պիտի լինի ձևավորել հաղորդակցական իրազեկություն: Ուսուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր բաղադրիչները, որոնք նպաստում են դրա իրականացմանը՝ լեզվական և խոսքային միջոցները, տեքստերը, հաղորդակցական իրադրությունները: Այս ամենի արդյունքում ապագա մասնագետը կկարողանա ճիշտ ընտրել

⁵ Արաքսի Դարբինյան, *Մասնագիտական բառապաշարի ուսուցումը բնագիտական ֆակուլտետներում*, էջ 71, Բանբեր պետական համալսարանի, Եր., 2022, 68-78:

⁶ Գ. Գևորգյան, Գ. Վարդանյան, *Գործառական հայոց լեզու*, Եր., 2021:

⁷ Վ. Գաբրիելյան, *Գրավոր խոսք*, Եր., 2012, էջ 170:

հաղորդակցության ռազմավարությունը, դրսևորել արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ:

СООБРАЖЕНИЯ ПО ВОПРОСАМ ПРОГРАММЫ И СОДЕРЖАНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Ключевые слова: *профессиональный армянский язык, лексика, текст, языковая норма, профессиональная речь, языковая единица.*

Целью преподавания армянского языка в вузе должно быть формирование коммуникативных навыков. Для организации обучения необходимо учитывать все компоненты, способствующие его реализации: языковые и речевые средства, тексты, коммуникативные ситуации. В результате всего этого будущий специалист сможет правильно выбрать стратегию общения и продемонстрировать навыки эффективного общения.

CONSIDERATIONS ON THE PROGRAM AND CONTENT OF PROFESSIONAL ARMENIAN LANGUAGE

Keywords: *professional Armenian language, vocabulary, text, linguistic norm, professional speech, linguistic unit.*

The goal of teaching Armenian at a university should be to develop communication skills. To organize training, it is necessary to take into account all the components that contribute to its implementation: language and speech means, texts, communicative situations. As a result of all this, the future specialist will be able to correctly choose a communication strategy and demonstrate effective communication skills.

Գրականություն

1. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2012:
2. Գ. Գևորգյան, Արևելահայերենի գործածության նորմեր և շեղումներ, Եր., 2021:
3. Գ. Գևորգյան, Գ. Վարդանյան, Գործառական հայոց լեզու, Եր., 2021:
4. Դարբինյան Ար., Մասնագիտական բառապաշարի ուսուցումը բնագիտական ֆակուլտետներում, էջ 71, Բանբեր պետական համալսարանի, 2022:
5. Л.А. Введенская, Л.Г. Павлова, Е.Ю. Катаева, Русский язык и культура речи: Учебное пособие для вузов. Ростов, 2001, ст. 4.
6. Լեզվի մասին ՀՀ օրենք, հոդված 2, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=90418>:
7. «Բարձրագույն և հետրուսական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետ և ՀՀ Կառավարության 2005 թ. ապրիլի 14-ի «Բարձրագույն մասնագիտական և հետրուսական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին» N 449-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետ: